

Նիւթերու քննարկման ընթացքին:

Բարոյագիտութեան մասին իր երկը կը կոչուի «*Ծանկի՛ր զքեզ*» (լատ.՝ „scito te ipsum“, անգլ.՝ „Know yourself“), ուր կը շեշտէ, որ անհատի մը վարմունքը կամ վարուելակերպը արժեւորելէ աւելի, հարկ է անոր մտադրութիւնը կամ դիտաւորութիւնը (Intention) արժեւորել, որովհետեւ մտադրութիւնն է, որ կը ցոլացնէ անհատի ներքին հաւանութիւնը այդ ձգտումին նկատմամբ: Այլ խօսքով, վարմունք մը լաւ ու բարի է, ոչ թէ անոր համար որ *բարին* կը բովանդակէ, այլ որովհետեւ ան լոկ *բարի* մտադրութենէ մը կը բխի: Աբելարդոսի համաձայն, *բարի* մտադրութիւնը որոշողը անհատի խիղճն է. իսկ ինքնին *բարին* կը կայանայ Աստուծոյ կամքի հանդէպ հաւանութիւն յայտնելով, իսկ *չարը*՝ զայն արհամարհելով:

### ➤ Ալբերտ Մեծ

Ալբերտ Մեծ (Albertus Magnus, 1206 – 1280 թ.), որ իր հանրագիտակա-նութեան համար կոչուած է՝ «համայնագէտ դոկտոր» (doctor universalis), ծնած է՝ Գերմանիա եւ եղած դոմինիկեան միաբան: Կաթոլիկ Եկեղեցւոյ կողմէ, 1622 թուականին, կը դասուի երանելի, իսկ աւելի ուշ, 1931-ին՝ կը սրբադասուի:

Ալբերտ Մեծ քաջ ծանօթ էր հնադարեան փիլիսոփայութեան (մանաւանդ Արիստոտելի) եւ արաբական փիլիսոփայութեան (մանաւանդ Իպն Բուլզդի – Averroes): Ալբերտ Մեծի համաձայն, Աստուած գերագոյն ճշմարտութիւնն ու *Գերագոյն Բարին* է, այս պատճառով մարդ պետք է Աստուծոյ ձգտի իր մտածումներով ու արարքներով: Իսկ անմահ հոգին, ամբողջութիւն մը կազմելով հանդերձ, իր մէջ կը կրէ զանազան կարողութիւններ, ինչպէս՝ բուսա-կան, զգացական եւ բանական:

Բարոյագիտութեան ոլորտին մէջ, ան կը շեշտէ մարդկային կամքի ազա-տութիւնը: Բարոյականութեան պարտականութիւնն է, բանականութեամբ, կրքոտ մղումներու ձեւաւորումը (մեղմելու իմաստով): Այս գործընթացի ըն-թացքին, յոյժ կարեւոր աստեան մըն է՝ մարդկային *խիղճը*<sup>(14)</sup>:

### ➤ Թոմաս Աքուինացի

Թոմաս Աքուինացի (Thomas Aquinas, 1224 – 1274 թ.) ծնած է Իտալիա: Ան եղած է դոմինիկեան միաբան, ուսանած եւ դասախօսած է Փարիզի համա-լսարանին մէջ: Իր փիլիսոփայական-աստուածաբանական ընդարձակ դրութե-ամբ (system) ան կը հանդիսանայ Միջնադարու ամենաազդեցիկ եւ ամենա-նշանաւոր փիլիսոփայ-աստուածաբանը: Իր անունով կոչուած է փիլիսոփա-յական-աստուածաբանական ուղղութիւն մը՝ *Թոմականութիւնը* (Թոմիզմ, Thomism):

---

(14) **Խիղճ** (անգլ.՝ Conscience, գերմ.՝ Gewissen) հասկացութեան մասին, տե՛ս Մաս – 9, էջ 472: